Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան

17.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ի. Բաղմանյանի
մասնակցությամբ անդամներ՝ Ա. Աթանեսյանի
Վ. Դալլաքյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քաղաքացիական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Տ

Բողոքարկվել են քաղաքացիական իրավունք բաժնի 9-րդ, 41-րդ, 39-րդ, 34-րդ, քաղաքացիական դատավարություն բաժնի 9-րդ, 26-րդ, 22-րդ հարցերը:

Քաղաքացիական իրավունք բաժին

Հարց 9

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը կարգավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1167-րդ հոդվածի 1-ին մասով և 1168-րդ հոդվածի 2-րդ մասով:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1168-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ֆիրմային անվանման օգտագործում է համարվում նաև տվյալ իրավաբանական անձը նշելու նպատակով ֆիրմային անվանման կիրառումը ցուցանակների, ձևաթղթերի, ազդագրերի, ապրանքների, դրանց փաթեթավորման վրա, ինչպես նաև օրենքով չարգելված այլ կիրառումներ:

Հարց 41

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ ՀՀ վճռաբեկ դատարանը, թիվ ԵԱՆԴ/0399/02/09 քաղաքացիական գործով 01.04.2011 թվականի որոշմամբ անդրադառնալով նշված հարցին, արձանագրել է, որ գրավադրված անշարժ գույքն իրացնելիս տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գինը կարող է լինել միայն դրա արագ վաճառքի գինը, այսինքն՝ լիկվիդացիոն արժեքը, քանի որ միայն նման ձևով է հնարավոր ապահովել գրավի առարկայի արագ իրացումն ու գրավառուի պահանջների բավարարումը:

Հարց 39

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հավակնորդի կողմից ընտրվել է առաջադրված հարցի ճիշտ պատասխանը, այն է՝ 3-րդ տարբերակը, ինչպես նաև այն, որ Ստուգող հանձնաժողովի կողմից Հավակնորդի միավորը չի հաշվվել, Հանձնաժողովը գտնում է, որ այն ենթակա է վերանայման:

Հարց 34

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հավակնորդի կողմից ընտրվել է առաջադրված հարցի ճիշտ պատասխանը, այն է՝ 3-րդ տարբերակը, ինչպես նաև այն, որ Ստուգող հանձնաժողովի կողմից Հավակնորդի միավորը չի հաշվվել, Հանձնաժողովը գտնում է, որ այն ենթակա է վերանայման:

Քաղաքացիական դատավարություն բաժին

Հարց 9

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ նշված հարցի վերաբերյալ առկա է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում:

Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԴ/31316/02/20 քաղաքացիական գործով 02.12.2021 թվականի որոշմամբ անդրադառնալով այն այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք էլեկտրոնային եղանակով կատարված պետական տուրքի վճարման վերաբերյալ փաստաթուղթը կարող է համարվել պետական տուրքի վճարման փաստը հավաստող պատշաճ ապացույց այն դեպքում, երբ այն ներկայացված է թղթային տարբերակով և դրանում առկա է վճարող իրավաբանական անձի իրավասու անձի էլեկտրոնային ստորագրությունը, արձանագրել է, որ էլեկտրոնային եղանակով կատարված վճարումների վերաբերյալ վճարահաշվարկային փաստաթղթերը թղթային տարբերակով ներկայացնելու դեպքում պահանջվում է բացառապես վճարող իրավաբանական անձի իրավասու անձի ստորագրությունը:

Հարց 26

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով:

Մասնավորապես, վկայակոչված նորմի համաձայն՝ հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է:

Նշվածից հետևում է, որ հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործելն արգելելու պահանջն իմպերատիվ է և այդպիսի ապացույցները չեն կարող

օգտագործվել նունիսկ այն դեպքում, երբ գործին մասնակցող անձը չի առարկում դրա դեմ:

Հարց 22

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածի 6-րդ մասով:

Մասնավորապես, վկայակոչված նորմի համաձայն՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձին գործի քննությանը ներգրավելու դեպքում գործի քննությունը շարունակվում է, եթե նա չի միջնորդում գործի քննությունը վերսկսելու մասին:

Նշվածից հետևում է, որ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձին գործի քննությանը ներգրավելու դեպքում Դատարանի կողմից գործի քննությունը շարունակելու հանգամանքը պայմանավորված է գործի քննությանը ներգրավված ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձի կողմից գործի քննությունը վերսկսելու մասին միջնորդություն չներկայացնելու հետ:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 7625 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակի.

Քաղաքացիական իրավունք բաժնի 39-րդ և 34-րդ հարցերի պատասխանները գնահատել յուրաքանչյուրը 1 միավոր, իսկ բողոքը մնացած մասով մերժել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ի. ԲԱՂՄԱՆՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ **Ա. ԱԹԱՆԵՍՅԱՆ**

Վ. ԴԱԼԼԱՔՅԱՆ